# Գույնզգույն զարդեր թղթից

Գունավոր թղթից կարելի է պատրաստել գեղեցիկ «հուլունքներ», որոնցից էլ՝ բազմազան զարդեր։

Անհրաժեշտ են՝ գունավոր թղթեր, սոսինձ, մկրատ, քանոն, սև հասարակ մատիտ, փայտե ձողիկ։



Քանոնի և մատիտ օգնությամբ գունավոր թղթի վրա գծում ենք երկար եռանկյուններ, որի հիմքի լայնությունը կարող է լինել 2-4 սմ, իսկ բարձրությունը՝ 9-15 սմ։



Եռանկյունները կտրատում ենք.



Ստացված եռանկյունների վրա բարակ երիզով սոսինձ ենք քսում, ապա այն փաթաթում փայտիկի վրա.



Սոսինձը քսում ենք հիմքից մոտ կես սմ հեռավորության վրա, որպեսզի փաթաթելիս թուղթը փայտիկին չկպչի։







Ստացված «հուլունքները» զգուշորեն հանում ենք փայտիկի վրայից.





Մնում է այս դետալները անցկացնել թելի կամ ռեզինի վրա և ստանալ վզնոց կամ թևնոց։



Նմանատիպ «հուլունքներ» ստանալու համար կարելի է օգտագործել նաև գույնզգույն ամսագրերի թղթերը: